

ՆԻԻԹԵՐ ՀԱՅԵՐԷՆԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ԳՐ. ՎԱՆՑԵԱՆ

(ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՊՐ. Ս. Մ-ին)

«Արարատ» № 1 1899 Պր. Ս. Մ., ամիտփելով մեր լուրածը հազ-
կական շերանունների մասին («Մուրճ» 1898. Դեկտր), հետևեալ նկատու-
շութեամբ է վերջացնում.

1) Լեզուն կենդանի կազմածք է, 2) լեզին քննածոյ պատէրներ տալ
չի կարելի Այսքանը հերիք լինի պ. Վանցեանի առաջարկութեան պիտանութեան
մասին ¹»...

Հէնց միայն աւսքանը... Փնստր, ապացոյց և հերքում չկալ աւստեզ,
ալ միայն պատգամ...

Լեզուն կենդանի կազմածք (օրգանիզմ) չէ,—Դա մի հնացած և շեռ-
վաթառնական թեբրին լիովին ջրած կարծիք է Գէլգէրի, Լազարուսի ²
Շոէլնթալի ³ և այլոց ջանքերով: Գելլուիկը, ներկայիս մեծագոյն լեզա-
բաններից մինը, բոլորելով ալդ սխալ կարծիքի դէմ, հետևեալն է ասում.
«Լեզուն մի էակ (Wesen)—օրգանիզմ չէ, ալ մի ֆունկցիօն է ⁴» (ապացու-
ցօն է):

Ալդ կարծիքը մի ժամանակ տիրող էր բնագիտնրի շրջանում. սա-
կալն Գարեհնը շիտեւ տալով ալն զարմանալի նմանութիւնը որ կալ կեն-
դանի օրգանիզմի և լեզւի մէջ, մի խօսք անգամ չի ասում, թէ լեզուն
«կենդանի կազմածք» լինէր, թէ և յա վերին աստիճանի նպաստաւոր պի-

¹ Ընդգծումը մերն է:

² S. L. Lazarus, Das Leben der Seele.

³ Steinthal, Abriss der Sprachwissenschaft, Berlin, 1881 մասն երկ-
րորդ:

⁴ D. Ibrück, Einleitung in das Sprachstudium, Leipzig, 1893.

որ լինէր իր թէօրիալին ¹. Եւ շա հասկանալի է. քանի որ լեզուն ոչ Նիւթի փոխանակութիւն ունի, ոչ էլ զաւակներ ծնելու կարողութիւն ², ապա Նրան զկենդանի կազմածքն անւանել նշանակում է ոչ լեզագիտութեանը ծանօթ լինել ոչ էլ բնագիտութեանը...

Լեզուն մի գործունէութիւն, մի անգեղան ֆունկցիոն է... Այս է ներկայիս տիրող կարծիքը լեզւի մասին գիտութեան մէջ.

Գալով պ. Ս. Մ-ի շօշուօթի երկրորդ կէտին, մենք ստիպւած ենք մի քիչ հանգամանօրէն պարզել մեր հալեցակէտը, թէկուզ անցեալը տեւտեւ կրկնելու երկիւղով. յուսալով, մի անգամ շրած հարցը մի քիչ աւելի լուսարանել և մի երկու տեսակէտ տալ, որ ինձ բոլորովին նոր են թուում. Մանաւանդ, որքան ես գիտեմ, այս հարցը իսկի ուսումնասիրւած չէ մեր լեզուում:

Անոր ամեն մի լեզւի կարծոր տարրերից մինն է. վտարօրէն կարելի է ստել, որ չկաչ լեզու առանց սեռի. Ամեն մի լեզու առսակաւը երկու սեռ պիտի ունենաչ, ալլապէս անկարելի կը լինէր սեռ որոշելը. կան սակաչն տասնեակ և աւելի սեռ ունեցող լեզուներ ³:

Հալերէնը աչն սակաւաթիւ լեզուներից է, որ հասել է բնական սեռը ճանաչելու գիտակցութեանը, որ երեք է. արական, իգական և չէզոք:

Հալերէնում՝ բառը առարկալի անան ներարտալարում է և սեռը. կին, հարս, զոքանչ ոչխար, — իգական են. ալր, փեսայ, աներ. տաղր, խոլ — արական: քար, փալտ, աթոռ — չէզոք են...

Ածականներից պառաւ — միաչն իգական է, ծեր կամ ալևոր — միաչն արական:

Շար անուններ սակաչն, մի հաստար սեռ չեն որոշում. զառ, մարշ, ձի, շուն և՛ արական են և՛ իգական. Քանի որ այս կենդանիները անսեռ չեն, ապա անուններն էլ առանց սեռի պիտի չլինէին: Նոչպէս է լեզուն ալլ անորոշութեան առաջն առնում, ինչ միջոցներով է նա շարմանում կեանքից և փորձից քաշած գիտակցութիւնը, որ սակաչն լեզւի մէջ մնում է անորոշ: Շար հասարակ կերպով. լեզուն շիմում է օժանդակ բառերի:

Մոտակ ձի կամ որձ ձի, էգ զառ կամ որձ զառ, քած կամ որձ շուն, արու կամ էգ զաւակ... կազմւած են միմիաչն սեռը որոշելու համար... էգ, մոտակ, քած, իգականը որոշող բառեր են. արու, որձ — արականը. փոքր վուրդը ալլ միջոցներ էլ ունի. տղամարդ, կնիկմարդ (կնիկարմար) մոնչտղալ, աղջիկ-տղալ, աղջիկ-պարո՞, տանգրիկին, երեցկին, քեռակին, սա-

¹ Տես. Գարսին. La descendance de l'homme, trad. par Barbier, Paris 1881. Երես 95-97.
² Թէ ինչ է կենդանի օրգանիզմը՝ տես Ֆեոփորն «կեանքի ծագումը» Մուրճ 1888 թ. № - 8
³ Friedrich Müller. Grundriss der Sprachwissenschaft.

նաժար, հորաքույր, հարսնքույր և այլն... բարդած են միմիայն սեռը որոշելու համար... Գրաբարը օրար փոխառութիւնների էլ է դիմել. Գազանէ, Հովհաննէ, Հերովդիա, Յուլիանէ—իգական ձևեր են. Հերովդէս, Յուլիանոս—արական, առնւած չունարէնից:

Խորովիղուխտ, Սանդուխտ, Շահանդուխտ առնւած է նոյն նպատակով պարսկերէնից (չուխտ=չուսոր): Կալ Նան Սիրանուշ, Հակոնուշ, Սմբատանուշ և այլն... Այդ բառերից և մասնիկներից ոչ մինը, սակաւն, որի ապագութեան և ընդհանուր դործածութեան չհասաւ. որքան միջոցները չանո նոյնքան էլ նրանք անչարմար էին կիրառութեան. և լեզւի աչք կարիքը, որ զգացուում էր դարեր շարունակ, լուծեց չանո դարբորինաբար: Այդ կարիքը սորիպեց միջնադարեան հաչերին դիմելու մի բուրովին օրար և խորթ աղբւրի—արաբերէնին, որից նրանք փոխ առան ուրիշ բառը, որ նշանակում է աղջիկ. Ներկաչ հաչերէնում դա լիովին կորցրել է իր նախնի նշանակութիւնը և ամփոփելով դառել է մի չարմարաւոր սեռի չօր, որ աւելանալով արական ձևերի վրայ, դարձնում է իգական. վարժուհի, դիցուհի, թագուհի, սրբուհի, դերասանուհի, սպասուհի՝ այլն: Առանց աչք մասնիկի, մենք սորիպած պիտի լինէինք կին վարժապետ, կին թագաւոր, կին դերասան կին սուրբ ասելու, որ մեզ աչօր խորթ և անաջող է թւում: Գա ապացոյց է, որ փոխառութիւնը եղել է վերին ասորիճանի անհրաժեշտ և աջող:

Այս երևույթը մենք աչքից պիտի բաց չթողնենք. ուր սեռը որոշելու կարիք կայ, թէ կենդանի բարբառներն ու գրաբարը եւ թէ մեր զոյգ գրական լեզուները գիտում են եւ՛ մասնաւոր-օժանդակ բառերի, եւ՛ բարդութիւնների եւ՛ օտար փոխառութիւնների, լինի դա յոյն, պարսիկ կամ արաբ...:

Մեթոդը պարզ է. լեզուն ամեն ճիգ թափում է մթութիւնը փարատելու, անորոշը որոշելու, կարիքը և լաւագոյն դարմանը գտել է արաբերէնի մէջ...:

Հարցն այն է, թէ ինչպէս է որոշուում մեր դերանունների սեռը:

«Ժամի դռնում, դողդոջալով, կանգնած էր մի աղքատ կին. նորահանդերձ պատառ-պատառ, չունէր շապիկ իւր հագին. անհամարձակ նա իւր ձեռը... և այլն...»

Ի՞նչ սեռ ունին այստեղ նորա, իւր, նա դերանունները. դպրոցական աշակերտն էլ պիտի պատասխանէ.—իգական, որովհետեւ գործ են ածւած կնոջ տեղ:

¹ Չգիտենք, ով և իցէ ի նկատի է ունեցել այս կէտը. Խորենացու քննադատներին մենք կ'ուզէինք դիտել որա Տիգրանուհի անունը, որ ութերորդ դարուց առաջ չէր կարող կազմւած լինել, մինչ դա Տիգրան առաջինի քուրը պիտի լինէր, որ սպրում էր Քրիստոսից առաջ...:

Վարդանը քաջ է, նրա բաղուկները հուժկու են, նրա ձախը առույգ է և ալն... Աչտոել շերանունը արական է: Անշունչ առարկաների տել գործածուող շերանունն էլ անշունչ է:

Հալերէն դիրանուններն էլ, ուրեմն անունների նման երեք սեռ ունին, որ մենք ճանաչում ենք գործածութեան տեղին համեմատ:

Ժամանակ է, որ մենք թոշներք այն սխալ և հին կարծիքը, թէ մեր շերանունները սեռ չունին. ով կատկածում է, թող շնորհ անէ մի որեէ հարած հալերէնից եւրոպական լեզւի, մանաւանդ անգլիերէնի թարգմանել, որ այս շէպքում իր ընտան սեռով ամենամօրն է մեր լեզւին:

Այդ սխալ և սարածած կարծիքը ծագում է նրանից, որ մի որեէ շերանուն մերոնք վերցնում են ոչ թէ նախարատութեան հետ, ուրեմն իր շերի և ֆունկցիոնի մէջ, այլ անկախ: Ուտի նա ջլատում և կորցնում է իր նշանակութիւնը. մինչ մեզ չեն կարող ցոյց տալ մի հարած որի մէջ շերանունը սեռ չունենար:

Մեր լեզուն և երեք սեռ ունի, շերանունները նոյնպէս երեք սեռ ունին. և ուրիշ կերպ չէր կարող լինել: Ի՞նչ է ուրեմն մեր որոնածը: Աչն, որ երբ շերանունը դրած է մի արական և մի իգական անւան դիմաց, չփոթութիւն է առաջ է գալիս, մենք ստիպւած ենք լինում որոնելու դերանուն սեռը: Օրինակները տես մեր անցեալ չօրածում: Եփոթութեան պատճառն էլ այն է, որ սեռի համար առանձին ձև չունեն շերանունները: Տեսանք, որ անունների մէջ հարցը լուծել է օտար փոխառութեամբ. շերանունների համար դա մի անկարելիութիւն է. և արհեստական փորձերն էլ աջող ելք չեն ունեցել: Չնաչելով մեր գրական լեզուն շերանունների բազմաթիւ ձևեր ունի, չնաչելով որ այդ ձևերը բացի խառնակութիւնից ոչ մի բանի չեն ծառայում, «մեր հարստութիւնը մնում է սառնը փթած», և մեր լեզուն մնում է անճիշտ, որովհետև արականի համար էլ մենք գործ ենք ածում նրանք, նորանք և նորա, մինի փոխանակ երեք, իգականի համար էլ, չէզոքի համար էլ...

Ի՞նչ մնաս կ'ունենայինք: Եթէ իգականի համար գործածէինք միայն մի ձևը, ինչպէս որ արել է Նալբանդեանը, հնդեկերով լեզուների զարգացման այն օրէնքին, որ կոչւում է ձևերի սարբերումն (չիֆֆերենցիացիօն): Գրանով ամեն մի սեռ ստանում է մի շերանուն երեքի փոխանակ և չփոթութիւնը վերանում է ինքնին. Ազուն կանոնադրում է առանց մի նոր բան ստանալու եւ առանց մի որեէ ձեւ կորցնելու ¹:

Կրկնում ենք, ամեն մի սեռի համար երեքի փոխանակ մինը գործածեցէք եւ արդէն պակաս վերանում է: Այս դա նորութիւն չէ, դա կատար-

¹ Չէզոքի համար առաջիմ ասելիք չունենք. եթէ կան նորա գրաբար ձևի բարեկամներ, կարող էին գուցէ աջողութեամբ չէզոքի տել գործածել:

ւում է ամեն օր, ով աչք ունի շփոթելու և ականջ ունի լսելու, պիտի տեսնի և համոզւի, որ մենք նորոթին չենք ասում, ինչ որ կատարում է շարունակ, բայց անգիտաբար, մենք առաջարկում ենք դարձնել գիտակցական:

Արգելելով այս ամենը, խառնակը թողնելով խառնակ, պ. Ս. Մ. մեզանից առաջ մի այլ առաջարկ է անում պ. Արեղեանի հետ. — Չէզոք անունների տեղ գործածել ոմոր, անորից արեմտեան ձևերը:

Այսպէս՝ պ. Ս. Մ-ի կանոնով պիտի գրենք. «Փայտերը բերէք, աղոթք մեզ հարկաւոր են. տունը ցուրտ է, անոր մէջ ես չեմ բնակում, այս հացից չեմ ուզում, անորից տուր...»

Եւ այս ձևերը զբօսանքի հանելուց լետոյ պ. Ս. Մ. դալիս է մեր գլխին խրատ կարդալու, որ «լեզուին քմահաճոյ պապէր տալ չի կարելի»...

Նա լեզւի մէջ մոցնում է մեր ականջի համար մի լիովին անծանօթ տարր, մեր ունեցած երեք ձևերի վրայ աւելացնում է և մի չորրորդը, (եւ թէ կարծես քիչ էր), առանց սակաւն վերացնելու հին անկանոնութիւնը և... ապա... պարտք է համարում լեզւի շատեր տալ. Նիթէ մենք ինկատի չունենալինք պ. Ս. Մ-ի պատկառելի տարիքը, որ իր հետ բերում է երկրասարդներին տեղի և անտեղի խրատ կարդալու սովորութիւնը, ապա պիտի համարձակէինք լիչեցնելու Քրիստոսի աշամանդեայ խօսքերը... «Երբորդ աչքի շիւշը տեսնում ես, իսկ քոնի գերանը մտանում»...

Գալով վերջին կէտին, պիտի նկատենք, որ պ. Ս. Մ. լաւ ծանօթ չի երևում մեր գրականութեանը երբ նա միայն թարգմանիչներին է մեղադրում: Գարուս ամենամեծ հաւ արտիստներից երկուսը, մի Գուրեան և մի Ադամեան նրանց հետ նախ շնոր առաջնակարգ ու երկրորդական բանագիրներ կարիք են զղացել իգական ձևերի և գործ են ածել Կաւթի անյաղթի հնարածը:

Նրանք թարգմանիչներ չլին: Խորհուրդ կը տալինք մի զբօսանք կատարել նրանց գործերի և առհասարակ արեմտեան գրականութեան մէջ, ուր պ. Ս. Մ. լաճախ իր սխալ պնդումներն հերքել իր շեթիւնների պիտի հանդիպի:

ժրճ. 1999 թ.